Մոգ-բուլհաշարի

կաղապարերը.

(բամբակի վերաբերմամբ)

633.5
Ա-18

24 ... 2016
IV-18

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ

# ԱԳՐՈԼԻԱԶՈՐԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

Ա.018:63
Ա-82

(ԲԱՄԲԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ)

ԳԻՆԸ Է 10 ԿՈՊ.

AZƏRNƏŞR
ԲԱԳՈՒ—1931

19106

– JAN 2013

Тип. „Красный Восток“ Азполиграфа, Баку Карантинная 84.

Главлит 1766. Заказ 3818. Тираж 1000. Ст. ф. Б6.

## ԱԳՐՈԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գյուղերում ընտրվում են ագրոլիազորներ այն նպատակով, որ բամբակաբուծների լայն խավերին բամբակային պլանի իրագործման ու բերքատվությունը բարձրացնելու աշխատանքներին անմիջապես մասնակից դարձնեն և հասարակական հսկողություն ունենան առանձին տնտեսությունների վրա՝ կոնտրակտացիայի պայմանագրերի համաձայն տարվող ագրոտեխնիկական բարելավումները ճշտորեն ու ժամանակին իրագործելու համար։

Ագրոլիազորներն այնպիսի կազմակերպություն են, որի միջոցով գյուղացիական մասսաներն անմիջապես մասնակցում են գյուղական տնտեսության բարձրացմանը և բերքատվության ավելացմանը։ Միաժամանակ ագրոլիազորները ստորին ագրոպերսոնալի ամենամոտ օգնականներն են, որոնք նրան օգնում են գյուղատնտեսական միջոցառումները կյանքում իրագործելու համար։

Ագրոլիազորի գործունեությունը պետք է առաջ տարվի այնպիսի գծով, որ բամբակ ցանելու համար պլանի ամբողջ տարածությունը ցուցակագրվի ու կոնտրակտացիայի ենթարկվի, այդ հողերը ժամանակին նախապատրաստվեն, նրանցում բամբակ ցանվի և ժամանակին տեխնիկապես ճիշտ կերպով գործադրվեն այն բոլոր ագրոմիջոցառումները, որոնք նախատեսնված են ագրոմինիմումի կանոնադրությամբ։

12599-57

## ՈՎ ԿԱՐՈՂ Է ԱԳՐՈԼԻԱԶՈՐ ԼԻՆԵԼ

Ագրոլիազորներին ընտրում է 30—35 տնտեսություններից բաղկացած ցանողների խմբակը, որոնց ցանքսերը մի հողային մասսիվ են կազմում և իրարից հեռու չեն ընկած։ Ագրոլիազորին հաստատում է գյուղխորհուրդը։ Վերջինիս ղեկավարության տակ ագրոլիազորը հսկում է իր խմբակի անհատական տնտեսությունների արտադրական գործունեությունը։ Ագրոլիազորներն ընտրվում են բատրակներից, չքավոր գյուղացիներից և առաջավոր միջակ գյուղացիներից, որոնք տնտեսական—կազմակերպչական աշխատանքի փորձառություն ունեն, որոնք աչքի են ընկնում իրենց հասարակական աշխատանքով և նպաստում են կուսակցության ուղիղ դասակարգային գծի կիրառմանը գյուղում։

Ագրոլիազորների ընտրություններին մասնակցում են այն քաղաքացիները, որոնք ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն։ Ընտրություններին չեն կարող մասնակցել և չեն կարող ընտրվել նրանք, ովքեր զրկված են ընտրողական իրավունքից։

## ԱԳՐՈԼԻԱԶՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

### Ագրոմինիմումի ուսումնասիրությունը

Ագրոլիազորներին իրենց իրավունքների ու պարտականությունների, նաև կառավարության կողմից տվյալ ռայոնի վրա դրված կոնկրետ անելիքների հետ ծանոթացնելու նպատակով՝ ագրոլիազորների համար գյուղխորհուրդներին կից կազմակերպվում են 5-օրյա դասընթացներ—սեմինարներ Հողժողկոմատի տված ծրագրով։



Ագրոլիազորի համար անհրաժեշտ է իմանալ տվյալ ռայոնում ընտրված բամբակային ագրոմինիմումի բովանդակությունը։

Ագրոմինիմումի գործադրելը ագրոլիազորի հիմնական գործն է հանդիսանում և նա դրա վրա պետք կենտրոնացնի իր գլխավոր ուշադրությունը։

Բամբակային ագրոմինիմումի բովանդակությունը տարբեր ռայոններում տարբեր է, համաձայն տեղական պայմանների, սակայն իր հիմնական մասում նա կայանում է հետևյալում.—

## ԲԱՄԲԱԿ ՑԱՆԵԼՈՒ ԴԱՇՏԵՐԸ ՄԻ ՄԱՍՍԻՎ ԴԱՐՁՆԵԼ

Բամբակ ցանելու համար տվյալ հասարակության հողերից հնարավորության չափ պետք է մի համատարած հողամաս առանձնացնել՝ Սա բամբակային մինիմումի առաջին կետը։ Այս կետն ի նկատի ունի հեշտացնելու բամբակային դաշտերի մշակումը և բարձրացնելու գյուղատնտեսական գործիքների արտադրողականությունը։ Օրինակ, միևնույն բամբակացան մեքենայով մեծ տարածությունների վրա կարելի է մի աշխատանքային օրում ավելի ցանել, քան մի փոքր հողամասից մյուսին անցնելու դեպքում։ Բամբակային հողերից մի մասսիվ կազմելը զգալի չափով հեշտացնում է տրակտորի աշխատանքը, ոռոգման ջրի գործածության մեջ մեծ խնայողություն է առաջացնում և նպաստում է կոլխոզներ կազմակերպելուն։ Ագրոլիազորն այնպես պիտի անի, որ գյուղացիների այն խմբակը, որին ինքը ծառայում է, միացնի իր ցիր ու ցան բամբակային հողամասերը և կազմի մի կամ մի քանի մասսիվ։

## ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ ՀՈՂԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ (ՀԵՐԿԵԼ) ՍԿՍԱԾ ԱՇՈՒՆՔԻՑ

Այս միջոցառումը հնարավորություն է տալիս բամբակի բերքատվությունը զգալի չափով ավելացնելու։ Աշնան հերկած հողը մինչև գարուն սառնամանիքի ազդեցության տակ փշրվում է մանր կտորների, խոնավություն է կուտակում և նպաստում է բամբակի լավ աճելուն ու զարգանալուն։ Բացի այդ, աշնան հերկը ուժեղ միջոց է բամբակի զանազան վնասատուների դեմ կռվելու համար. բամբակի շատ վնասատուներ ձմեռն անց են կացնում հողի մեջ և երբ հերկելու ժամանակ շուռ են գալիս և ընկնում են հողի երեսը, նրանց մեծագույն մասը սառնամանիքների ազդեցության տակ վոչնչանում է։

Ագրոլիազորը պետք է բացատրական աշխատանք տանի այն գյուղացիների մեջ, վորոնց նա ծառայում է։ Նա գործնականապես պետք կազմակերպի ցանողներին, վորպեսզի հերկը ժամանակին կատարվի։ Յեթե գրուպպայի մեջ առանձին գյուղացիներ կենդանի լծկան ուժի պակասություն են զգում, ագրոլիազորը օգնում է նրանց, առանձին ցանողների մեջ լծկանների հարաքաշություն կազմակերպելով, իսկ յեթե հնարավոր է, շենային ընկերությունների միջոցով տրակտորային հերկ է կազմակերպում։

## ԲԱՄԲԱԿ ՑԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՇԱՆԱԿՎԱԾ ՀՈՂԵՐԸ ԹՓԵՐԻՑ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՄԱՔՐՎԱԾ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՆ

Ամեն մի գյուղացի գիտե, վոր տրակտորով, ձիու գութանով, ցանելու մեքենայով և այլ գործիքով աշխատելիս թփերի տակ յեղած տեղերը պետք է թողնել անցնել և դրա պատճառով դաշտի մի մասը դատարկ է մնում։ Բացի դրանից, այդ դեպքում տրակտորին կցած գործիքները և ձիու միջոցով աշխատող գյուղատնտեսական ինվենտարը շատ հաճախ կոտրվում են։

Ի՞նչումն է կայանում լիազորի դերն այս գործում։ Այս գործի համար ռայգործկոմի և գյուղխորհրդի վորոշած ժամանակի համաձայն լիազորը բացատրական աշխատանք է տանում և կազմակերպում է դաշտերը թփերից մաքրելու գործը, հատուկ ուշադրություն դարձնելով, վոր թփերը վոչ թե կտրվեն, այլ արմատախիլ արվեն։

## ՎՈՌՈԳԵԼՈՒ ՑԱՆՑԸ ՊԵՏՔ Է ՆՈՐՈԳՎԻ ՈՒ ՄԱՔՐՎԻ ՌԱՅԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ ՏԵՂԵՐՈՒՄ ՎՈՐՈՇԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐԻՆ

Դրանից է կախված արաթի և բամբակացանի ժամանակին կատարելը. այս պատճառով ագրոլիազորը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այդ աշխատանքների կատարելու վրա և այնպես անի, վոր այդ աշխատանքները անպայման ճշտիվ կատարվեն ջրատնտեսությունների վորոշած ժամկետներում։

## ՆՈՅԵՄԲԵՐԻՑ ՍԿՍԱԾ ԱՄԵՆՈՒՐԵՔ ՀԵՐԿԱԾ ՀՈՂԻ ՎՈՌՈԳՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ

Այս միջոցառումը մեր հանրապետության մեջ համեմատաբար նոր է, բայց արդեն մեր շատ բամբակաբույծների մեջ ժողովրդականություն է ձեռք բերել, վորովհետև ձմրան արաթը հնարավորություն է տալիս զգալի կերպով պակասեցնելու ամառվա վոռոգումների ժամանակ ծախսվող ջրի քանակը և ազատում է գարնանացանից առաջ ջրելու անհրաժեշտությու-

նից, գլալի չափով առնում է հողերի վորացման առաջը և այլն։

Ագրոնոմը պետք է հետևի, վոր իր կողմից սպասարկվող ամբողջ խմբակն անպատճառ այդ աշխատանքը կատարի աշնան հերկած հողերի վրա։ Ձմրան արաթ չպետք է կատարել այն հողերի նկատմամբ, վորոնք պարզապես ճահճոտ են կամ վորոնց տակը ստորերկրյա ջրերը մոտ են հողի շերտին, վորտեղ գյուղացիները սովորաբար գարնան արաթ չեն անում։

## ԳԱՐՆԱՆ ԱՐԱԹԸ ՊԵՏՔ Է ՍԿՍԵԼ ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ

Այն հողերը, վորոնք ձմրան արաթի չեն յենթարկվել, պետք է վարողվեն գարնանը։ Ագրոնոմը պետք է այնպես անի, վոր իր խմբակի անդամները բամբակի դաշտերը սկսեն ջրել ապրիլի 1-ից վոչ ուշ։

Այս աշխատանքի մեջ լիազորից հատուկ զգաստություն է պահանջվում, վորովհետև յեթե այս կամ այն ցանողը մի փոքր ուշացնում է արաթը, դա վոչ միայն հարվածի տակ է դնում խմբակի ամբողջ գյուղի աշխատանքը, այլ և ուշացնում է բամբակի ցանելը։ Այս աշխատանքը ժամանակին վերջացնելու համար անպայման անհրաժեշտ է գիշերներն էլ վարողում կատարել։

## ԲԱՄԲԱԿԱՑԱՆԸ ՊԵՏՔ Է ՎԵՐՋԱՆԱ ՄԱՅԻՍԻ 10-ԻՑ ՎՈՉ ՈՒՇ

Այս ժամկետը ամենահիմնական ժամկետներից մեկն է բամբակի բերքատվությունը բարձրացնելու հարցում։ Բամբակի ցածր բերքատվությունն անցած տարիներում մեծ մասամբ բացատրվում է նրանով, վոր մենք



բամբակացանը ուշացրել ենք (մեզ մոտ հաճախ դեպքեր են յեղել, յերբ բամբակը ցանել են հունիսին)։ Ամեն մի բամբակարույծ գիտե, վոր այդպիսի ցանքերից լավ արդյունքներ չի կարելի սպասել։

Ի՞նչ պետք է անի ագրոնոմը, վորպեսզի նրա գրուպպան ցանքսը ժամանակին վերջացնի։ Դրա համար նա պետք է այնպես անի, վոր հերկն ու արաթը ժամանակին կատարվեն, պետք է հետևի, վոր մինչև մարտի վերջերը ցանելու գործիքները կարգի բերվեն և ցանողները ժամանակին սերմացու ստանան։

## ՌԱՅՈՆԱԿԱՆ ՊԼԱՆՈՎ ՆՇԱՆԱԿԱԾ ԱԳՐՈՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԲԱՄԲԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԱՏԱՐԵԼ

Ամեն մի ցանող պայմանագիր է կնքում շենային ընկերության հետ և բացի այլ հարցերից, պարտավորվում է բամբակային դաշտերում մի շարք գյուղատնտեսական միջոցառումներ իրագործել, այսինքն քաղհան անել, ցանածը նոսրացնել, հողը փափկացնել և այլն։ Առաջին քաղհանը և նոսրացնելը պետք է վերջանան ծիլերը դուրս գալուց հետո վոչ ուշ քան 20 որվա ընթացքում։ Քաղհանի և նոսրացնելու ժամկետները ռայոնի ներսում, առանձին գյուղերի նկատմամբ վորոշում է ռայգործկոմը։ Բամբակի աճման ընթացքում պետք է վոչ պակաս քան 3 անգամ քաղհան անել և 3-ից վոչ պակաս անգամ ձիով կուլտիվացիա կատարել, և այդ նույնպես այն ժամկետներում կատարել, վոր վորոշել են ռայգործկոմն ու գյուղխորհուրդը։

## ԲԱՄԲԱԿԻ ՑԱՆՔԱՅԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է ԱՄԲՈՂՋ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Այս բոլոր ժամկետների և ցանողի պարտավորությունների մասին ագրոնոմը պետք է ստույգ

նից, գլալի չափով առնում է հողերի ողողման առաջը և այլն:

Ագրոլիազորը պետք է հետևի, որ իր կողմից սպասարկվող ամբողջ խմբակին անպատճառ այդ աշխատանքը կատարի աշնան հերկած հողերի վրա: Ձմրան արաթ չպետք է կատարել այն հողերի նկատմամբ, որոնք պարզապես ճահճոտ են կամ որոնց տակը ստորերկրյա ջրերը մոտ են հողի շերտին, որտեղ գյուղացիները սովորաբար գարնան արաթ չեն անում:

## ԳԱՐՆԱՆ ԱՐԱԹԸ ՊԵՏՔ Է ՍԿՍԵԼ ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ

Այն հողերը, որոնք ձմրան արաթի չեն յենթարկվել, պետք է ոռոգվեն գարնանը: Ագրոլիազորը պետք է այնպես անի, որ իր խմբակի անդամները բամբակի դաշտերը սկսեն ջրել ապրիլի 1-ից ոչ ուշ:

Այս աշխատանքի մեջ լիազորից հատուկ զգաստություն է պահանջվում, որովհետև յեթե այս կամ այն ցանողը մի փոքր ուշացնում է արաթը, դա ոչ միայն հարվածի տակ է դնում խմբակի ամբողջ գյուղի աշխատանքը, այլ և ուշացնում է բամբակի ցանելը: Այս աշխատանքը ժամանակին վերջացնելու համար անպայման անհրաժեշտ է գիշերներն էլ ոռոգում կատարել:

## ԲԱՄԲԱԿԱՑԱՆԸ ՊԵՏՔ Է ՎԵՐՋԱՆԱ ՄԱՅԻՍԻ 10-ԻՑ ՈՉ ՈՒՇ

Այս մոմենտը ամենահիմնական մոմենտներից մեկն է բամբակի բերքատվությունը բարձրացնելու հարցում: Բամբակի ցածր բերքատվությունն անցած տարիներում մեծ մասամբ բացատրվում է նրանով, որ մենք



բամբակացանը ուշացրել ենք (մեզ մոտ հաճախ դեպքեր են յեղել, յերբ բամբակը ցանել են հունիսին): Ամեն մի բամբակաբույծ գիտե, որ այդպիսի ցանքսերից լավ արդյունքներ չի կարելի սպասել:

Ի՞նչ պետք է անի ագրոլիազորը, որպեսզի նրա գրուպպան ցանքսը ժամանակին վերջացնի: Դրա համար նա պետք է այնպես անի, որ հերկն ու արաթը ժամանակին կատարվեն, պետք է հետևի, որ մինչև մարտի վերջերը ցանելու գործիքները կարգի բերվեն և ցանողները ժամանակին սերմացու ստանան:

## ՌԱՅՈՆԱԿԱՆ ՊԼԱՆՈՎ ՆՇԱՆԱԿԱԾ ԱԳՐՈՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԲԱՄԲԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԱՏԱՐԵԼ

Ամեն մի ցանող պայմանագիր է կնքում շենային ընկերության հետ և բացի այլ հարցերից, պարտավորվում է բամբակային դաշտերում մի շարք գյուղատնտեսական միջոցառումներ իրագործել, այսինքն քաղհան անել, ցանածը նոսրացնել, հողը փափկացնել և այլն: Առաջին քաղհանը և նոսրացնելը պետք է վերջանան ծիլերը դուրս գալուց հետո ոչ ուշ քան 20 որվա ընթացքում: Քաղհանի և նոսրացնելու ժամկետները ռայոնի ներսում, առանձին գյուղերի նկատմամբ որոշում է ռայգործկոմը: Բամբակի աճման ընթացքում պետք է ոչ պակաս քան 3 անգամ քաղհան անել և 3-ից ոչ պակաս անգամ ձիով կուլտիվացիա կատարել, և այդ նույնպես այն ժամկետներում կատարել, որ որոշել են ռայգործկոմն ու գյուղխորհուրդը:

## ԲԱՄԲԱԿԻ ՇԱՐՔԱՑԱՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է ԱՄԲՈՂՋ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Այս բոլոր ժամկետների և ցանողի պարտավորությունների մասին ագրոլիազորը պետք է ստույգ

տեղեկություն ունենա, վորպեսզի հետևի նրանց իրագործմանը։ Ագրոլիազորը պետք է հիշի, վոր ցանքսը խնամելու աշխատանքները ժամանակին կատարելը բամբակին վերաբերող աշխատանքի ամենահիմնական մոմենտն է կազմում և դրանից է կախված լավ բերք ստանալը։

## ԱՆԳԱՅՄԱՆ ԿՌԻՎ ՄՂԵԼ ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ

Մոլախոտերի դեմ կռվելու համար (բացի քաղհանից և կուլտիվացիայից) ագրոմինիմումը նախատեսնում է անպայման հարել այն մոլախոտերը, վորոնք բուսնում են դաշտերի սահմաններում և վոռոգման ջրանցքների ափերին։ Այդ աշխատանքը պետք է կատարվի մինչև մոլախոտի ծաղկելը, վորպեսզի նրանք չկարողանան սերմ տալ։ Ինչ վերաբերում է վնասատուների դեմ կռվելուն, այդ կռիվը պետք է տարվի այն ժամկետներում և այն միջոցներով, վորոնք տվյալ ռայոնի և գյուղի համար կմատնանշվեն ռայոնական հողբաժնի կողմից։

Ագրոլիազորը պետք է ծանոթանա այս բոլոր աշխատանքներին և հետևի, վոր իր կողմից սպասարկվող խմբակը կատարի այդ աշխատանքները։

## ԱՐԳԵԼԵԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻՆ ԱՐԱԾԱՑՆԵԼԸ ՑԱՆՔԱՏ. ԴԱՇՏԵՐՈՒՄ

Անասունները ցանքսերի մեջ, մանավանդ աշնացանի մեջ արածացնելը մեղնում համատարած չերևույթ է: Սակայն շատ հաճախ պատահում է, վոր անասուններն արածացնում են նաև բամբակի դաշտերում և դրա հետևանքով բամբակի աճումը թուլանում է, իսկ յերբեմն ցանքսը բոլորովին փչանում է։

Ագրոլիազորի դերը ներկա դեպքում նրանումն է, վոր նա գոյություն ունեցող օրենքների հիման վրա՝ ցանողների հետ միասին կազմակերպի ցանքսերի պաշտպանությունը արածացնելուց։

Ահա սրանք են բամբակային ագրոմինիմումի հիմնական կետերը, վորոնք պարտադիր են հանրապետության բոլոր բամբակային ռայոնների համար։ Բայց, ինչպես մենք վերը ասացինք, ռայգործկոմներն այս հանրապետական ագրոմինումիմի հիման վրա կազմում են իրենց ռայոնական ագրոմինիմումները, վորտեղ նրանք, տեղական պայմանների համաձայն, անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ են մտցնում։

---

Բացի նրանից, վոր ագրոլիազորը պետք է հսկի, վոր իր սպասարկման յենթակա բամբակաբույծների գրուպպան ագրոմինիմումը կատարի, նրա վրա պարտավորություն է դրվում նաև հսկելու, վոր ցանողները բամբակային կոոպերացիայի դիմաց կատարեն կոնտրակտացիայովստանձնած պարտավորությունները։ Այստեղ ագրոլիազորը ամենաակտիվ մասնակցություն պիտի ունենա արտադրական խորհրդակցություններում ցանքսերի պլանը մշակելիս, իսկ հետագայում ամենաակտիվ կերպով պետք է մասնակցի բամբակի ցանքսերը հաշվի առնելու և պայմանագրեր կնքելու կամպանիայում։

Ագրոլիազորի մասնակցությունը պետք է արտահայտվի նրանում, վոր նա ստուգում է, թե վորքան իրական են իր խմբակի ցանողի վերցրած պարտավորությունները։ Այստեղ հիմնական նպա-

տակն այն է, վոր խուսափի այնպիսի դեպքերից, յերբ ցանողն ասենք համաձայնում է ցանել 3 հեկտար, մինչդեռ նա յերկու հեկտար վարելահող ունի։ Դրա հետ միասին ագրոլիազորը պետք է նաև հետևի, վոր իր գյուղպլան օգտագործի իր բոլոր հնարավորությունները (հողը, լծկանները, բանվորական ձեռքերը և այլն) բամբակի ցանքսերն ամենալայն չափով ծավալելու համար։

Բամբակի պայմանագրման ժամանակաշրջանում ագրոլիազորի անելիքը պիտի լինի իր խմբակի անդամներին բացատրել պայմանագրի հիմնական փունկցիաները, վորպեսզի ամեն մի ցանող լավ իմանա այն մասին, թե ինչ է տալու իրեն պետությունը՝ պայմանագրելով նրա բամբակային հողը և ինչ է պահանջելու նրանից դրա փոխարեն։ Ագրոլիազորը գործոն մասնակցություն պիտի ունենա պայմանագրերի նախնական մշակմանը, վորը կատարվում է պայմանագրման կամպանիան սկսվելուց անմիջապես առաջ՝ գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություններում կամ թե շինային ընկերություններում։

Պայմանագրման կամպանիան վերջացնելուց հետո լիազորն իր ուշադրությունը կենտրոնացնում է այն բանի վրա, թե ինչպես է պատրաստվում նրա խմբակը ցանքսն անց կացնելու համար, այսինքն՝ պիտի կազմակերպի հերկը, հետևի ինվենտարի նորոգմանը, վոռոգման ցանցի ժամանակին մաքրելուն և այլն։

Հետագայում ագրոլիազորն անց է կացնում իր աշխատանքը համաձայն ագրոմինիմումի այն պահանջների, վորոնց մասին մենք խոսել ենք վերևում։

Առանձնապես պատասխանատու է լիազորի աշխատանքը՝ բամբակը հավաքելու ժամանակաշրջանում.



այստեղ լիազորը պետք է աշխատի, վոր իր խմբակը ժամանակին ձեռնարկի բամբակի քաղին, վոր քաղը կատարվի կանոնավոր կերպով, վոր վոչ մի կնդուղ չմնա դաշտում առանց քաղելու, իսկ վոր գլխավորն է, վոր ամբողջ հավաքված բամբակը վոչ մի դեպքում չմնա տնտեսությունում, այլ հանձնվի պետությանը։

Ցանողների խմբակի այդ ամբողջ փոխադարձ ոգնությունը, վերահսկողությունը, և միասին գործելը պետք է ագրոլիազորն ու գյուղական խորհուրդն օգտագործեն՝ բամբակարույծների չքավորական և միջակային տնտեսությունները հետագայում գրավելու գյուղում գոյություն ունեցող կոլխոզը կամ նոր կոլխոզ կազմակերպելու համար։

Կուլակային-հարուստ տնտեսությունները (վոչ մի դեպքում չեն մասնակցում ագրոլիազորի ընտրությանը և չպիտի լինեն ցանողների խմբակի անդամ) կատարում են բոլոր ագրոմիջոցառումները (հերկ, ջրել, ցանքս և քաղ) համաձայն իրենց տրված հաստատուն առաջադրությունների։

Վորոշ առաջադրություն ստանալով ագրոլիազորը հավաքում է իր խմբակը, ծանոթացնում է առաջիկա աշխատանքին և այդ ժողովում մշակվում է ճգրիտ օրացուցային պլան՝ հարկավոր աշխատանքները կատարելու համար։

Հետագայում լիազորը չպիտի սպասի նշանակված ժամկետի լրվելուն անցնելուն ու հետո միայն ստուգի, թե աշխատանքն ինչ չափով է կատարված։ Նա պարտավոր է ամբողջ ժամանակ պարբերաբար հետևի, թե խմբակի առանձին անդամներն ինչպես են կատարում այդ աշխատանքը, յեթե խմբակի մի քանի անդամներ դեռևս աշխատանքի չեն ձեռնարկել,

կամ թե այնքան դանդաղ են կատարում, վոր նշանակված ժամկետին չեն կարող վերջացնել, ագրոլիտագորը նրանց հիշեցնում է, և յեթե այդ չի ոգնում, հարցը դնում է ամբողջ խմբակի քննությանը, վորպեսզի նա ընկերական ուշադրություն և ներշնչում անի հետ մնացող բամբակաբույծներին։

Ագրոլիտագորը կարող է դիմել նաև հասարակական ազդեցության ուրիշ մեթոդների՝ շենային ընկերության, բատրակային կոմիտեի միջոցով, յեթե նա միության անդամ է, կուսակցական, կոմյերիտական բջիջի միջոցով, յեթե ցանողը կուսակցական կամ կոմյերիտական է։

Վերջապես, յեթե բոլոր միջոցները սպառված են բայց ցանողը շարունակում է համառել և չկատարել իր վրա վերցրած պարտականությունները, այն ժամանակ ագրոլիտագորը հաղորդում է այդ մասին գյուղխորհրդին՝ վարչական միջոցներով ազդելու համար։ Ագրոմինիմումի կետը խախտելու համար ռայգործկոմը սահմանում է տուժի վորոշ չափ, սովորաբար շատ դեպքերում—դրամական տուգանք, վորի չափը տարբեր է լինում, նայած թե վորքան կարևոր է ցանողի խախտած կետը և թե վոր սոցիալական խմբին է պատկանում։

Լիտագորի աշխատանքը կարող է արդյունավետ լինել միայն այն դեպքում, յեթե նա տեղյակ լինի գյուղի ամենորյա աշխատանքին, յեթե նա իմանա այն մասին, թե ինչ խնդիրներ կան բամբակաբույծների առջև ամեն մի տվյալ մոմենտում։ Դրա համար անհրաժեշտ է, վոր լիտագորն ամենասերտ կերպով կապված լինի տեղական խորհրդային և կոոպերատիվ կազմակերպությունների հետ։

---



Ագրոլիտագորի անմիջական ղեկավարներն են գյուղխորհուրդը և գյուղխորհրդի գյուղատնտեսական սեկցիան, վորտեղից նա պիտի ստանա աշխատանքային առաջադրությունը։ Սակայն, լիտագորն իր գործնական աշխատանքում պիտի կապված լինի նաև շենային ընկերության հետ, ակտիվ կերպով աջակցի վերջինիս՝ բամբակաբույծների մեջ զանազան կամպանիաներ տանելիս, նա պետք է կապված լինի նաև տեղական գյուղատնտեսի հետ, վորից կարող է շատ ոգտակար բաներ սովորել թե ինքը և թե իր խմբակը՝ բամբակը մշակելու վերաբերմամբ։

Այդ դեռ քիչ է. հենց «ագրոլիտագոր» կոչումը վկայում է այն մասին, վոր նա գյուղում գյուղատնտեսի գլխավոր ոգնականն է զանազան գյուղատնտեսական միջոցառումներ իրականացնելու գործում։

Ագրոլիտագորն ամենաակտիվ կերպով պիտի մասնակցի գյուղխորհուրդների կից յեղած գյուղատնտեսական արտադրական խորհրդակցությունների աշխատանքին, վորտեղ սովորաբար քննվում են գյուղական տնտեսության բոլոր կարևորագույն հարցերը։ Այդ խորհրդակցություններում էլ ագրոլիտագորը պետք է հաշիվ տա իր աշխատանքների մասին՝ 3 ամիսը մեկ անգամից վոչ պակաս։ Վորովհետև արտադրական խորհրդակցություններում հաշիվ են տալիս նաև ուրիշ լիտագորները, վորոնք գործում են տվյալ գյուղխորհրդի ռայոնում, դա հնարավորություն կտա բոլոր ագրոլիտագորներին իրենց փորձը փոխանակելու և միասին գծելու իրենց աշխատանքի լավացման ուղիները։

## ԲԱՄԲԱԿԱԲՈՒՅԾԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՐԱՑՈՒՅՑԸ

Լավ, բամբակի պլանի կատարումը ապահովող բերք ստանալու համար անհրաժեշտ է ամբողջ տա-

րին խնամք տանել բամբակին։ Բամբակ աճեցնելու ամբողջ աշխատանքը հետևյալ կերպով է բաժանվում ըստ ամիսների՝

ՀՈՒՆՎԱՐ.—Ցել շարունակվում է։ Դաշտը պետք է մաքրել ցողուններից։ Ձմեռային արաթն ավարտվում է և մինչև հունվարի կեսը։

ՓԵՏՐՎԱՐ.—Վոռոգման սխեմի նշագրում։ Ինվենտարի նորոգում։

ՄԱՐՏ.—Կատարվում է գարնանային վաղ հերկ այն հողերում, ուր ցել չի արված։ Ձմեռային արաթի յենթարկված հողերը փխրացվում են։ Գարնանային վաղ հերկը բոլոր ռայոններում պետք է վերջացնել մինչև ապրիլի մեկը։

ԱՊՐԻԼ.—Տարվա ամենից պատասխանատու ժամանակն է։ Ցանքսի կանոնավոր կազմակերպումը, հողի կարգին վոռոգումը, ժամանակին և ուշադիր հերկը ու ժամանակին ցանքսն ապահովում են լավ ծիլը։ Ապրիլի առաջին որերից կատարվում է գարնանային արաթ, վորը տևում է մինչև մայիսի սկիզբը։ Բոլոր ռայոններում ցանքսն սկսվում է մոտավորապես ապրիլի 20-ից և տևում է մինչև մայիսի 10-ը։

ՄԱՅԻՍ.—Բամբակի ցանքսն անպատճառ պիտի վերջանա մինչև մայիսի 10-ը։ Մայիսին դուրս են գալիս առաջին ծիլերը։ Մայիսի 2-րդ կեսից պարտադիր կարգով սկսվում է նոսրացումը և առաջին քաղհանը՝ վաղ ցանքսերում։ Լավ մշակված դաշտերում համատարած ձեռնաքաղհանը մասամբ կարող է փոխարինվել կուլտիվացիայով՝ շարքերում։ Քաղհանն ուշացնել չի կարելի, վորովհետև այդ ժամանակաշրջանում մոլախոտերը սաստիկ աճում են և խեղդում են ծիլերը։ Ուշ ցանքսերում սկսվում է նոսրացումը և քաղհանը։



ՀՈՒՆԻՍ.—Առաջին քաղհանի ավարտումը և ուշ ցանքսերի նոսրացումը—մինչև հունիսի 10-ը։ Ավարտվում է 2-րդ քաղհանը և կուլտիվացիան։ Կատարվում է առաջին վեգետացիոն վոռոգումը և նրանից հետո անմիջապես կուլտիվացիան։ Սկսվում 2-րդ քաղհանը և կուլտիվացիան ուշ ցանքսերում։ Հունիսի վերջին կատարվում է 2-րդ վեգետացիոն վոռոգումն այնտեղ, ուր առհասարակ 3 ջրից ավելի է տրվում։

ՀՈՒԼԻՍ.—Յերրորդ քաղհանը և կուլտիվացիան։ Մասամբ 4-րդ քաղհանը և կուլտիվացիան։ Կատարվում է յերկրորդ և տեղ-տեղ 3-րդ վեգետացիոն վոռոգումը։ Պայքար բամբակային ափխի դեմ։

ՈԳՈՍՏՈՍ.—Մինչև ոգոստոսի 15-ը վերջացնել մասնակի քաղհանն այնտեղ, ուր ժամանակին—հունիսին չի կատարվել։ Պայքար դաշտերում վնասատուների դեմ։ Այդ ժամանակաշրջանն ավելի լարված է, ուստի և անհրաժեշտ է բոլոր աշխատանքները կատարելու համար մոբիլիզացիայի յենթարկել ամբողջ աշխատավոր գյուղացիությանը։ Ամսի կեսին սկսվում են բացվել առաջին կնգուղները, պետք է հոգալ բարդաններ ստանալու համար և պատրաստել փոխադրական միջոցներ բամբակը գնման կետերը տանելու համար։

ՍԵՊՏԵՄԲԵՐ.—Նախապատրաստություն ցելի համար։ Պայմանագրերի կնքում մեքենա-տրակտորային կայանների հետ՝ ցելի համար։ Ինվենտարի նորոգում և անասունների նախապատրաստում։ Հողամասերի նախապատրաստում, դրանց ազատումը թփերից և հերկը խանգարող մացառներից։ Ժամանակին և կանոնավոր կերպով հավաքել բերքը։ Հիմնական առուների և արխերի նորոգումը։

2458
12599-57

Այդ նույն ժամանակ՝ հողայուցմունքների միջոցով հողամասեր պիտի հատկացվեն բամբակին։ Ջոկված բամբակային հողերը դարձվում են ամբողջ մասսիֆներ։

ՀՈԿՏԵՄԲԵՐ.—Կատարվում է բերքի 2-րդ քաղը։ Ցելի սկիզբը։ Բամբակը հասցնել գնման կետերը։

ՆՈՅԵՄԲԵՐ.—Կատարվում է բամբակի 3-րդ քաղը և բերքի հանձնումը։ Շարունակվում է ցելը մինչև ամսի վերջը և սկսվում է ձմեռային արաթը, այսինքն հերկած դաշտերը ջրվում են։

ԴԵԿՏԵՄԲԵՐ.—Ավարտվում է քաղը և հանձնվում է բերքը։ Շարունակվում են ցելն ու ձմեռային արաթը։



# ՀԱՎԵԼՎԱԾ

| Աշխատանքի անունը | Ռայոնները | Կատարման ժամկետները |
|---|---|---|
| 1. Աշնանային ձմերային հերկ 65 հազար հեկտար | Բոլոր ռայոնները . | 100% մինչև 10/ II 31 թ. |
| 2. Ձմերային արաթ 60.000 հեկ. | » » . . . | 100% » 1/ II » |
| 3. Վաղ գարնանային հերկ | Պուշկինսկի, Սալյանի, Ալի Բայրամլուի, Սաբիր Աբադի, Աղջաբադու, Բարդայի, Թարթառի, Քյուրդամիրի և Կարա-Սուի . . . . | 20% » 1/III »<br>25% » 10/III »<br>30% » 20/III »<br>25% » 1/VI » |
| | Ուջարու, Աղդաշի, Խինդիրստանի, Մարգուշևանի, Դալ-Մամեդլուի, Գյանջայի, Սամուխի, Շամխորի, Թաուզի, Ղազախի . . . . . | 10% » 1/III »<br>30% » 10/III »<br>30% » 20/IV »<br>30% » 1/IV » |
| | Նախիջևանի, Նորաշենի . . . . . | 10% » 10/III »<br>30% » 20/III »<br>60% » 1/IV » |
| 4. Պարարտանյութերը գնման կետերը հասցնելը | Բոլոր ռայոնները բացի Պուշկինսկից | 1—10 մարտի |
| | Պուշկինսկի . . | 10—20 մարտի » |

| Աշխատանքի անունը | Ռայոնները | Կատարման ժամկետները |
|---|---|---|
| 5. Պարարտանյութերը ցանելը և ցրանից հետո ցաքանելը | Բոլորը, բացի Պուշկինոյից . . . | 25%— 1–10 մարտի »<br>75%—10—20 » » |
| | Պուշկինոյի . . . | 75%—10–20 » »<br>25%–20–30 » » |
| 6. Ձմերային արաթ արված տարածությունների ցաքանելը | Բոլոր ռայոնները | 5 օրվա ընթացքում հողը այն չափ չորանալուց հետո, երբ կարելի է ցաքանել. Գյանջայի ռայոնում, մոտավորապես 1—10 մարտի, մնացած ռայոններում 10–20 մարտի։ |
| 7. Առվույտ ցանելը | Նախիջևանում . . | 50% — 15/III — 25/III<br>50% — 25/III — 5/IV |
| | Դալմամեդլուի, Գյանջայի, Սամուխի, Շամխորի, Թաուզի, Ղազախի . . | 50% — 16/III — 25/III<br>50% — 5/III — 15/III |
| | Մնացած ռայոնները . . . . . . | 25%— 1/III—15/III<br>50+— 5/III—10/III<br>25%— 1/III—15/III |
| 8. Բամբակի սերմի ռայոնները տանելը | Բոլոր ռայոնները բացի Պուշկինոյից | 1/I մինչև 1/III [illegible]<br>10/III » 20/III » |
| 9. Բամբակի սերմի բաժանումը | Պուշկինոյի . . | 20/III » 25/III »<br>Համարվելով բամբակի պայմանագրման ընթացքին։ |



| Աշխատանքի անունը | Ռայոնները | Կատարման ժամկետները |
|---|---|---|
| 10. Գարնանային արաթ անելը | Բոլոր ռայոնները | Կախված ռայոնից, նրա հողային պայմաններից և ցանքսի համար սահմանված ժամկետներից՝ սկսած այս տարվա 1/IV դրա համար տեղերում պետք է մշակված լինեն ցանքսային պլանները։ |
| 11. Արաթ արած հողերի հերկը և բամբակ ցանելը | Բյուրդամիրի, Ուջարու . . . . . | 15% — 17/IV — 22/IV<br>25% — 2/IV — 27/IV<br>30% — 27/IV — 2/V<br>20% — 2/V — 7/V<br>15% — 7/V — 10/V |
| | Շամխորի, Թաուզի, Աղստաֆայի | 15% — 25/IV — 1/V<br>30% — 1/V — 5/V<br>55% — 25/V — 10/V |
| | Մնացած ռայոններում . . . . . | 15% — 20/IV — 25/IV<br>25% — 25/IV — 1/V<br>30% — 1/V — 6/V<br>30% — 5/V — 10/V |
| 12. Ձմերային արաթ արած հողերի հերկ-ռանց շերտերը շրջելու և ցաքանելու | Բոլոր ռայոններում . . . . . . | 100%— 10/IV — 20/IV |
| 13. Առվույտի առաջին վոռոգումը | Մուղանի ռայոնները . . . . . . | 1-ին հարից հետո։<br>Ջրված աշնանային ցանքսերը՝ արաթը վերջացնելուց հետո 5 օրվա ընթացքում։ |

| Աշխատանքի անունը | Ռայոնները | Կատարման ժամկետները |
|---|---|---|
| - | Մնացած ռայոնները | Մայիսի 5-ից (արաթը վերջացնելուց հետո): |
| 14. Առաջին քաղհանը, փորելը և կուլտիվացիան կամ փափկացնելը | Բոլոր ռայոնները | 20/IV մինչև 10/V |
| 15. Յերկրորդ և յերրորդ կուլտիվացիան կամ ձեռքով փխրացնելը, քաղհանը | Այն ռայոններում, ուր մի անգամ է վեգետացիոն վոռոգում կատարվում | Մինչև ջրելը 2-րդ կուլտիվ փխրացումը, 2 կուլտիվ. արանքում 10/IV—30/VI կուլտիվ. 30/VI: |
| | Այն ռայոններում, ուր շատ անգամ է վեգետացիոն վոռոգում կատարվում . | Մինչև ջրելը տալիս և 2-րդ կուլտիվ: կամ փափկացումը 15/VI—25/VI |
| 16. Վեգետացիոն վոռոգում | Այն ռայոններում, ուր մի անգամ է վեգետացիոն վոռոգում արվում . . . | 25/VI—25/VII այս ու. |
| | Այն ռայոններում, ուր շատ անգամ է վեգետացիոն վոռոգում արվում . . . | 25/VI—25/VI » |
| 17. Յերկրորդ և հետևյալ վոռոգումները | Բոլոր ռայոններում . . . . . . | Կախված տեղական պայմաններից, բայց բոլոր վոռոգումները վերջացնել անպատճառ մինչև 15/VIII |
| 18. Վոռոգումներից փխրացում կամ կուլտիվացիա և քաղհան | Բոլոր ռայոններում . . . . . . | Ջրած հողը չորանալուց հինգ որ հետո: . . |
| 19. Բամբակի քաղը | Բոլոր ռայոններում . . . . . . . | 1) Սահմանել այսպիսի նորմաներ կնգուղների բացման, քաղի սկիզբը վորոշելու համար.<br>Առաջին քաղ . . . 35%<br>Յերկրորդ » . . . 30%<br>Յերրորդ » . . . 25%<br>2) Քաղը կատարելու ժամկետները,<br>Առաջին քաղ մինչև 1/ II<br>Յերկրորդ » » 1/ X<br>Յերրորդ » » 15% 1/XI<br>10% 1/I |

*Ծանոթություն.*—Յերրորդ քաղի ժամկետները վորոշելիս այն հիմքն է վերցրված, վոր առաջի յերկու քաղերը կազմում են ամբողջ բերքի 75%-ը:

Հողագործության ժողովրդական կոմիսար՝
Մ. ԿԱՍՈՒՄՈՎ.

Գործավար՝ ԹԱԽԽԱՆՈՎ.

66
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — ССРА
им. А. Мясникяна
ՀՀ Ազգային գրադարան
NL0288675

19.106